

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Փալիկյան Ս. Փ.

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի լրագրողիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի պրոֆեսորի պաշտոնակատար, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Հանգուցային բառեր և արտահայտություններ. ներառում, ներառական կրթություն, ԿԱՊԿՈւ երեխաներ, հանրակրթություն, հատուկ կրթություն:

Արտասահմանյան երկրներում, անցյալ դարի 70-ական թվականներից սկսած, աշխատանքներ են իրականացվում հաշմանդամների կրթական հնարավորությունների ընդլայնմանը նպաստող չափորոշային փաստաթղթերի մշակման ու ներդրման ուղղությամբ: Այս բնագավառում ԱՄՆ-ի և Եվրոպայի ժամանակակից կրթական քաղաքականության մեջ զարգացում են ստացել մի քանի մոտեցումներ, այդ թվում՝ կրթություն ստանալու հնարավորության ընդլայնումը (widening participation), մեյնստրիմինգ (mainstreaming), ինտեգրացիա (integration) և ներառումը (inclusion): Մեյնստրիմինգը ենթադրում է, որ հաշմանդամ սովորողները հաղորդակցվում են տարեկիցների հետ տոնական օրերին կամ զանազան ժամանցային ծրագրերին համատեղ մասնակցելիս:

Ինտեգրացիան հոգեկան ու ֆիզիկական զարգացման խանգարումներ ունեցող երեխաների կա-

րիքների հարմարեցումն է կրթական համակարգին, որը նրանց համար հիմնականում մնում է անփոփոխ և չհարմարեցված: Ներառումը դպրոցի ռեֆորմ է և ուսումնական տարածքի այնպիսի վերապլանավորում, որը կհամապատասխանի առանց բացառության բոլոր երեխաների կարիքներին ու պահանջներին:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցումն ԱՄՆ-ում

Ներառական կրթության բնագավառում իրականացվող ԱՄՆ-ի ժամանակակից քաղաքականության էությունը հանրակրթական և հատուկ կրթության համակարգերի միաձուլումն է: Առաջարկվում է այս միաձուլմանը նպաստող երեք մոտեցում. «հիմնական ուղղություն», «մասսայական կրթության նախաձեռնություն», «ներառում»:

Այս մոտեցումները հատուկ կրթության բնագավառում առաջացնում են ակտիվ քննարկումներ և վեճեր:

«Հիմնական ուղղությունը» ենթադրում է հատուկ կրթական կարիքներով երեխաների տեղավորում հանրակրթական դպրոցների

դասարաններում: Դրա անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ այդ երեխաները ի վերջո հայտնվում են հասարակության մեջ, նրանց հարկավոր է ուղարկել դպրոց, որպեսզի հետագայում առանց դժվարությունների ներառվեն սոցիալական և ուսումնական գործունեության մեջ: Շատ սովորողների համար (հատկապես լուրջ թերություններով), այդ հաստատություններում տեղավորելը կարող է հանգեցնել մեծ անհաջողության:

«Մասսայական կրթության նախաձեռնություն» (ՄԿՆ) մոտեցումը առաջարկվել է ԱՄՆ-ի կրթության դեպարտամենտին կից գործող հատուկ կրթության բաժնի կողմից: ՄԿՆ-ն ավելի առաջ է անցնում, քան «հիմնական ուղղության» հայեցակարգը՝ առաջարկելով հատուկ կարիքներով երեխաների կրթական պայմանների հիմնարար փոփոխություններ: Որոշ հատուկ մանկավարժներ և մասայական դպրոցների ղեկավարներ ընդունում են ՄԿՆ-ն, այն դեպքում, երբ բազմաթիվ հատուկ մանկավարժներ և մասսայական դպրոցների ուսուցիչներ համարում են, որ անհրաժեշտ է լրացուցիչ փորձ և հետազոտությունների անցկացում, որպեսզի հասկանալի լինի ՄԿՆ-ի ազդեցությունը հատուկ կրթական կարիքներով (ԿԱՊԿՈՒ) սովորողների վրա:

«Ներառման» մոդելի համաձայն՝ անկախ արատի տիպից ու արտահայտման խորությունից, հանրակրթական գործընթացի մեջ՝ ըստ բնականության վայրի, պիտի ներգրավվեն բոլոր երեխաները: Այդպիսի յուրաքանչյուր երեխայի համար մասնա-

գետների խմբի կողմից ստեղծվում են անհատական ուսումնական ծրագրեր, որոնց համապատասխան էլ գնահատվում է յուրաքանչյուր սովորողի առաջընթացը: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այս մոդելի ներդրման գործընթացում ծագում են խնդիրներ, որոնք առաջին հերթին պայմանավորված են ուսուցչի կոմպետենցիաներին ներկայացվող բարձր պահանջներով, ուսուցիչ, ով պետք է կարողանա սովորեցնել ինչպես սովորական, այնպես էլ կրթական հատուկ կարիքներով երեխաներին:

Ներկայումս ԱՄՆ-ում գործում է 1990 թվականին ընդունված օրենքը, որը կոչվում է «Ակտ զարգացման շեղումներով երեխաների կրթության մասին»: Այն երաշխավորում է հանրակրթության համակարգում երեխայի կարիքներին համապատասխանող անվճար կրթություն: Ծնողներն իրավունք ունեն դպրոցից պահանջելու աշակերտի ուսումնական հնարավորությունների մասին եզրակացություն, որի մեջ նշվում է երեխայի զարգացման խանգարումների առկայության կամ բացակայության մասին հիմնավորում: Դպրոցի վրա է դրվում հատուկ կրթական կարիքներով երեխաներին բացահայտելու պարտականությունը: Օրենքը երեխային իրավունք է տալիս՝ ստանալու ոչ միայն հատուկ կրթություն, այլ նաև լրացուցիչ ծառայություններ (երթևեկության միջոց, լոգոպեդական ծառայություն, հոգեբանի օգնություն, աուդիոլոգիական հետազոտություն և այլն): Օրենքի համաձայն, յուրաքանչյուր երեխայի համար կազմվում է գրավոր եզրա-

կացություն և անհատական կրթական ծրագիր [1]:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցումը Շվեդիայում

Այս երկրում ԿԱՊԿՈՒ երեխաների մեծ մասը ներառված են հանրակրթական դպրոցի սովորական դասարաններում, որտեղ նրանք ստանում են անհրաժեշտ օժանդակություն (դասարանում հատուկ մանկավարժի կամ ասիստենտի օգնություն, կամ հատուկ (օժանդակ) միջոցների օգտագործման հնարավորություն): Լսողության, տեսողության, մտավոր զարգացման արտահայտված խանգարումներով, ինչպես նաև բարդ խանգարումներով երեխաները կրթություն են ստանում հատուկ կրթական հաստատություններում, որոնք տարբերակված են ըստ խանգարումների տեսակի: Այս դպրոցներում նրանք կարող են սովորել մինչև 21-23 տարեկան դառնալը:

Ներկայումս հատուկ դպրոցները միաժամանակ համարվում են հանրակրթական դպրոցներում ներառված երեխաների համար ռեսուրս կենտրոններ: Մտավոր զարգացման խանգարումներով երեխաների հատուկ դպրոցները ներառված են հանրակրթական դպրոցներում՝ առանձին դասարաններում:

Շվեդիայում բարդ խնդիր է համարվում վաղ մանկական աուտիզմով երեխաների հատուկ կրթության կազմակերպումը: Այս երեխաները սովորում են փոքր խմբերով՝ սովորական դպրոցներում: Յուրաքանչյուր երեք երեխայի հետ աշխատում են երկու ուսուցիչ և մեկ ասիստենտ:

Շվեդիայի հանրակրթական դպ-

րոցներում ներառական կրթության կազմակերպման նման գործընթացն առայժմ ոչ բոլորին է բավարարում: Ընդդիմախոսները գտնում են, որ այստեղ ներառումը չափազանց հապճեպ է կատարվում, որ ներառումն ունի շատ բացասական պահեր, հիշեցնելով այն մասին, որ ներառումը ոչ թե նպատակ է, այլ հատուկ կարիքներով երեխաների նորմալացման և աբիլիտացիայի գործիք: Միաժամանակ նշում են, որ ընդհանրապես հանրակրթական համակարգի վրա ներառման ազդեցության մասին անհրաժեշտ են գիտական հետազոտություններ [2]:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը Ռուսաստանի Դաշնությունում

Ռուսաստանի դաշնության կրթության և գիտության նախարարության տվյալների համաձայն՝ 2008-2009թթ փորձնական նպատակով ներառական կրթության մոդելը ներդրվում է Արխանգելսկի, Վլադիմիրի, Լենինգրադի, Մոսկվայի, Նովոգորոդի, Սամարայի, Տոմսկի և մի շարք այլ մարզերի հանրակրթական տարբեր տեսակի հաստատություններում: Մոսկվայում գործում է ավելի քան 1500 հանրակրթական դպրոց, որից միայն 50 է ներառական կրթության ծրագրով աշխատում: Ներկայումս հատուկ կրթական կարիքներով երեխաներին մատուցվող կրթական ծառայությունների շուկան Ռուսաստանում զուտ տնտեսական պատճառներով, չափազանց սահմանափակ է, որի հետևանքով փոքր քաղաքներում ու հեռավոր գյուղերում հաշմանդամ երեխաները մնում

են հանրակրթությունից դուրս: Հաշմանդամ երեխաների կրթության ավանդական ճևր դեռևս մնում են հատուկ (շտկողական) կրթական հիմնարկները:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցքղ անձանց ուսումնառությունը ժամանակակից մակարդակով իրականացնելու համար անհրաժեշտ է լուծել մի շարք հիմնախնդիրներ, այդ թվում՝ կրթության համակարգի կատարելագործումը: Այսօր առկա են բացահայտ հիմնախնդիրներ ինչպես օրենսդրական դաշտում, այնպես էլ սոցիալական աջակցության համակարգում:

ԿԱՊԿՈՒ երեխաների կրթության և դաստիարակության գործընթացում տիրող դժվարությունների զգալի մասը պայմանավորված է համապատասխան որակավորում ունեցող կադրերի՝ հատուկ մանկավարժների, հոգեբանների, դաստիարակների ու սոցիալական մանկավարժների սուր անբավարարությամբ կամ նրանց՝ մասնագիտական ոչ բավարար մակարդակով:

Դեֆեկտոլոգիա մասնագիտությամբ կադրեր պատրաստող ֆակուլտետների շրջանավարտների մեծ մասը ցածր աշխատավարձի պատճառով չի գնում հատուկ (օժանդակ) դպրոցներ աշխատելու, իսկ երբեմնի մանկավարժական մասնագիտությունների մեջ էլիտար համարվող ուսուցիչ - դեֆեկտոլոգի մասնագիտությունը ԲՈՒՀ-ի դիմորդների շրջանում ներկայումս կորցրել է իր վաղեմի հեղինակությունը: Հաշմանդամ երեխաների կրթության գործընթացի առանձնահատկություններն ինչպես հատուկ, այնպես էլ

հանրակրթության համակարգում պահանջում են իրականացնել էական փոփոխություններ ոչ միայն հատուկ կրթության, այլ նաև մի շարք այլ ֆակուլտետների (առաջին հերթին նախադպրոցական դաստիարակության և տարրական ուսուցման մասնագիտությունների) ուսումնական պլաններում:

Ներառական կրթության զարգացմանը խոչընդոտում է նաև անհրաժեշտ նյութատեխնիկական մատակարարման բացակայությունը: Հենաշարժողական համակարգի խանգարումներով երեխաների խնդիրների մեջ կարևոր տեղ է գրավում կրթական, առողջապահական, բնակելի շենքերի ու փոխադրամիջոցների, մշակութային ու մարզական հաստատությունների դժվարհասանելիության հարցը, որը փաստորեն նրանց կյանքը դարձնում է հասարակությունից մեկուսացված:

Ներկայումս ուսուցիչների ու տնօրենների մեծ մասը սակավ են տեղեկացված հաշմանդամության պրոբլեմների մասին և պատրաստ չեն ԿԱՊԿՈՒ երեխաներին հանրակրթական դպրոցների ուսումնական գործընթացում ներառելուն: Այնուամենայնիվ, Ռուսաստանի մի շարք շրջաններում արդեն առկա է ներառական կրթության ներդրման դրական փորձ:

Մի շարք կրթական ու հասարակական կազմակերպությունների աշխատանքի փորձը ցույց է տալիս, որ հաշմանդամ երեխաներն ունակ են պարապելու դրամատիկական, պարային ու սպորտային խմբակներում, մասնակցելու մրցույթների ու օլիմպիադաների, իրենց դրսևորե-

լու երաժշտության ու նկարչության մեջ: Այսպիսի դեպքերում ԿԱՊԿՈՒ Երեխաներն անլիարժեքության, հոգեբանական անհարմարության զգացում ավելի քիչ են ապրում, իսկ արդյունքում ավելի հեշտ են ինտեգրվում հասարակություն:

Այսօր ՌԴ-ում ներառական կրթությունը կարգավորվում է ՌԴ սահմանադրությամբ, «Կրթության մասին», «ՌԴ-ում սոցիալական պաշտպանության մասին» դաշնային օրենքներով, ինչպես նաև երեխայի իրավունքների Կոնվենցիայով և մարդու հիմնական ազատությունների և իրավունքների պաշտպանության Եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրությամբ:

2008 թվականին Ռուսաստանը ստորագրել է ՄԱԿ-ի՝ «Հաշմանդամների իրավունքների մասին» Կոնվենցիան, որի 24-րդ հոդվածում ասվում է այն մասին, որ կրթության իրավունքի իրականացման նպատակով մասնակից երկրները պետք է ներառական կրթություն ապահովեն բոլոր մակարդակներում և ուսուցում՝ ամբողջ կյանքի ընթացքում [3]:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը Ֆրանսիայում

Հատուկ կրթությունը ֆրանսիայում ձգտում է հնարավորինս մեծ թվով ԿԱՊԿՈՒ երեխաների ընդգրկել ներառական կրթության համակարգ: Զարգացման շեղումներով երեխաներին հանրակրթական գործընթացի մեջ ներառումը իրականացվում է 4 տարբերակով.

Երեխան սովորում է սովորական դպրոցական ծրագրերով, սակայն և՛

դպրոցում և՛ դպրոցից դուրս գտնվելու ժամանակ նրան տրամադրում են լրացուցիչ ծառայություններ՝ բժշկական օգնություն, դաստիարակչական բնույթի միջոցառումներ և այլն: Օրինակ, հենաշարժիչ համակարգի խախտումով երեխան կարող է սովորել սովորական դասարանում և հաճախել այդ դպրոցում կամ մոտակայքում բացված հարմարեցման կենտրոն:

Երեխան սովորում է հանրակրթական դպրոցում, օգտվում է լրացուցիչ խնամքից և կրթվում լրացուցիչ հատուկ ծրագրերով: Օրինակ, տեսողության խանգարումով երեխան հաճախում է սովորական դասարան, դասերը պատրաստելու համար ստանում օգնություն, լրացուցիչ պարապմունք ուսուցչի հետ, հաճախում է տարածական կողմնորոշման և այլ շտկողազարգացնող պարապմունքների:

Հիմնական դպրոցական ժամերին երեխան ուսուցումը ստանում է հատուկ դասարանում՝ հատուկ ծրագրով (սովորաբար հոգեկան զարգացման հապաղումով երեխաները): Ժամանակի մյուս մասը նա իր տարիքի երեխաների հետ մասնակցում է սովորական ծրագրով կազմակերպված պարապմունքներին:

Երեխան հաճախում է միայն հատուկ դասարան և սովորում է այնտեղ հատուկ ծրագրով (սովորաբար մտավոր խանգարումով երեխաներ): Սակայն, դրանով հանդերձ, նա անմիջական մասնակցություն է ունենում դպրոցական կյանքին. համատեղ նախաճաշեր, ժամանցի, դաստիարակչական ու սպորտային

միջոցառումներին մասնակցություն և այլն [4]:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունն Իտալիայում

Անցյալ դարի 70-ական թվականներից սկսած՝ հատուկ դպրոցների ու դասարանների սովորողների մեծ մասն Իտալիայում ինտեգրվեցին հանրակրթության համակարգ: Այսօր ԿԱՊԿՈՒ բոլոր երեխաների 99%-ը սովորում է հանրակրթական դպրոցներում: Սովորական դասարանում աջակցող մանկավարժից օգնություն ստանալու համար սովորողը պետք է հաշվառվի որպես ԿԱՊԿՈՒ երեխա: Գրանցումն իրականացվում է միայն ծնողների համաձայնությամբ և մեկ տարի ժամկետով: Այս ժամկետի ավարտից հետո որոշում է կայացվում ժամկետի երկարացման կամ չեղյալ համարելու մասին:

Սակայն Իտալիայում ԿԱՊԿՈՒ երեխաներին հանրակրթական միջավայր ինտեգրելու գործընթացի զարգացումը ուղեկցվում է անհետաձգելի լուծում պահանջող խնդիրներով: Այսպես, նկատվել է, որ պետական հատուկ դպրոցների թվի կրճատմանը զուգահեռ՝ ավելացել են մասնավոր հատուկ դպրոցներ հաճախող ԿԱՊԿՈՒ երեխաները: Երկրի տարբեր շրջաններում ներառական կրթության զարգացման հսկայական տարբերություններ գոյություն ունեն, քանի որ պետական մակարդակով այդ գործընթացի կարգավորումը նվազագույնի է հասցված:

Ուսուցիչների մեծ մասը չի բացառում ներառական կրթությունը,

սակայն դասարանի կյանքում ներդրման գործընթացը լուրջ խնդիրներ է առաջացնում: Նրանք նախընտրում են ԿԱՊԿՈՒ երեխաների ուսուցման ողջ պատասխանատվությունը դնել աջակցող ուսուցիչների ուսերի վրա, իսկ սովորական ուսուցիչները նախընտրում են, որ աջակցող ուսուցիչները ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատեն դասարանից դուրս:

Իտալիայում ներառական կրթության զարգացման գործընթացում գոյություն ունեցող խնդիրները պայմանավորված են մի շարք պատճառներով: Ներառման գործընթացն սկսվեց առանց երկրի տարբեր մարզերում առկա կարիքների լուրջ հետազոտության, համապատասխան մասնագետների առկայության մասին տեղեկությունների բացակայությամբ: Հանրակրթական դպրոցների՝ ներառական կրթության ուղղությամբ վերապատրաստում անցած ուսուցիչների քանակը սահմանափակ էր, իսկ մեկ ամիս տևողությամբ հատուկ պարապմունքները ցանկալի արդյունք չտվեցին, շատ ուսուցիչներ էլ ընդհանրապես վերապատրաստում չանցան: Դասարանի ուսուցիչի և աջակցող ուսուցիչի համակրծակցությունը հաճախ խնդրահարույց է դառնում: Աջակցման խմբի ուսուցիչները ներառման գործում ներդրեցին ավելի քիչ ավանդ, քան սպասվում էր: Ամենամեծ խնդիրը պայմանավորված է հանրակրթական գործընթացի մեջ խորը մտավոր հետամնաց երեխաների ներառմամբ: Շատ մասնագետներ գտնում են, որ այդպիսի երեխաների համար անհրաժեշտ է նորից բացել հատուկ դասարաններ: Սա-

կայն այդ առաջարկը Իտալիայում սկզբունքորեն մերժվում է, քանի որ այն նորից կարող է հանգեցնել հատուկ կրթության առանձին համակարգի ձևավորմանը, որը համարվել է որպես երեխայի «արժանապատվությունը ստորացնող» և ուսուցման համար ոչ օգտակար համակարգ: Արդյունքում, խորը մտավոր հետանացույթամբ երեխաների մեծ մասը պարզապես որևէ հաստատությունում չեն կրթվում: Ներառման գործընթացում առանձնակի խնդիր է նկատվում հանրակրթական դպրոցի բարձր դասարաններում: Առողջ երեխաների ծնողների մի մասը դեմ է իրենց երեխաների կողքին նույն դասարանում ԿԱՊԿՈՒ երեխաների առկայությանը: Ուսուցիչները ջանքեր չեն գործադրում ԿԱՊԿՈՒ երեխաներին կրթելու հարցում, քանի որ ներառման գործընթացին նրանց վերապատրաստումը պատշաճ մակարդակով չի իրականացվել: Ավագ դպրոցում աշխատող աջակցող խմբի ուսուցիչների մեծ մասը չունի համապատասխան մասնագիտական կրթություն: Լայն իմաստով ներառումը Իտալիայում կարելի է ընդունել որպես իրականացված նպատակ: Սակայն, հարցի վերաբերյալ կենտրոնացված և պարբերաբար մշակված տվյալների անբավարությունը թույլ չի տալիս ճշգրիտ պատկերացում կազմել հանրակրթության մեջ ներառման գործընթացի իրական արդյունքների մասին [5]:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը Լիտվայում

Լիտվան հաջողությամբ ընդօ-

րինակեց ներառական կրթության գերմանական մոդելը: Պահպանված մտավոր կարողություններով ԿԱՊԿՈՒ երեխաները կարող են սովորել հանրակրթական դպրոցներում: Լիտվայում 1-4-րդ դասարանի բոլոր երեխաները սովորում են առանձին տարրական դպրոցներում: 4-րդ դասարանն ավարտելուց հետո բոլոր սովորողները փոխադրվում են հաջորդ աստիճանի դպրոց և իրավունք ունեն ընտրելու դպրոցի տեսակը՝ գիմնազիա կամ սովորական: Պրակտիկան ցույց է տալիս, որ ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողները հաճախ իրենց ցանկությամբ 4-րդ դասարանից հետո նրանց տեղափոխում են հատուկ դպրոցներ՝ համոզվելով այն բանում, որ իրենց երեխան չի կարողանում ամբողջական ծավալով դպրոցական ծրագիրը յուրացնել այնպես, ինչպես մյուս երեխաները: Մտավոր խանգարումներով երեխաները նույնպես իրավունք ունեն սովորելու հանրակրթական դպրոցում, բայց միայն հատուկ դասարանում: Ընդ որում, Լիտվայում գոյություն ունի երկու տեսակի դասարան՝ մեկը թեթև մտավոր խնդիրներ ունեցողների համար, որը կոչվում է «հատուկ դասարան», իսկ մյուսը՝ չափավոր կամ նույնիսկ ծանր մտավոր հետամնացների համար, որը կոչվում է «զարգացման դասարան»: Կրթությունը հատուկ դասարանում իրականացվում է օժանդակ դպրոցի ծրագրով, իսկ զարգացման դասարանում՝ անհատական ծրագրերով, և ավելի շատ միտված է ընտանիքի սոցիալական աջակցությանը: Աշակերտները ծնողների ցանկությամբ կարող են դպրո-

ցում մնալ ամբողջ օրը: Տարրական դպրոցի հավաքակազմում կա մեկ լոգոպեդ, ով սպասարկում է հանրակրթական դասարանների երեխաներին, և մեկ լոգոպեդ, ով սպասարկում է հատուկ դասարաններին: Սուրդոմանկավարժի, տիֆլոմանկավարժի, շարժումների զարգացման մասնագետի և շտկողական այլ ծառայություններից ԿԱՊԿՈւ աշակերտներն օգտվում են շրջանային վերականգնողական կենտրոններում, ուր նրանց տեղափոխում են հատուկ փոխադրամիջոցով:

Այս երկրում լրջորեն լուծվում են խտրականության և բոլոր երեխաների համար հավասար իրավունքների պահպանման խնդիրները: Մասնավորապես միջնակարգ դպրոցի ավարտական փաստաթուղթը, անկախ մտավոր ունակություններից, ֆիզիկական հնարավորություններից և դպրոցի տեսակից, բոլոր շրջանավարտների համար ունի նույն ձևը: Բայց վկայականում կամ ատեստատում գոյություն ունի դպրոցի կամ դասարանի տեսակը նշող ծածկագիր, որը ցույց է տալիս, թե շրջանավարտը որ տեսակի դպրոցն է ավարտել: Բացի դրանից, բոլոր երեխաների համար դպրոցական դասագրքերը հրատարակվում են միևնույն չափով, որակով ու կազմով, սակայն տարբեր բովանդակությամբ՝ պայմանավորված երեխայի կրթական կարիքներով[6]:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը Խորվաթիայում

Խորվաթիայի հանրապետության օրենսդրությունն արդեն 20 տարի է,

ինչ նպաստում է սովորական դպրոցում սահմանափակ կարողություններով սովորողների ներառական կրթության զարգացմանը (Կրթության մասին օրենք՝ 1991թ. և միջնակարգ կրթության մասին օրենք՝ 1992թ): Ներառական կրթությունը դիտվում է որպես ավելի լայն՝ սոցիալական ներառման ծրագրի մաս:

Ներկայումս եվրոպական բոլոր երկրներում «ինտեգրացիա» եզրույթը փոխարինվել է «ներառում» եզրույթով, իսկ «զարգացման շեղումներով սովորողներ» արտահայտության փոխարեն օգտագործում են «կրթական հատուկ կարիքներով սովորողներ» արտահայտությունը: 20-րդ դարի վերջին և 21-րդ դարի սկզբին եվրոպական կրթության համար բնորոշ ներառական շարժումը ենթադրում է ոչ միայն զարգացման շեղումներով բոլոր անձանց ներառում, այլ նաև այն սովորողների, որոնք այս կամ այն պատճառով ունեն ուսուցման դժվարություններ: Ներառական կրթությունը ենթադրում է տարաբնույթ կրթական կարիքներով և պահանջմունքներով սովորողների համատեղ ուսումնադաստիարակչական գործընթաց (զարգացման տարբեր էթիոլոգիայով և դրսևորման տարբեր աստիճանի շեղումներով երեխաներ, սենսորային, շարժողական, հաղորդակցական տարբեր պահանջմունքներով երեխաներ, տարբեր ռասայական, էթնիկական, կրոնական, մշակութային և այլ խմբեր): Այսպիսով, ներառական շարժումն առաջին հերթին նպատակաուղղված է դպրոցի կողմից բարենպաստ պայմանների ստեղծման ճանապարհով

յուրաքանչյուր սովորողի կրթական նպատակների բավարարմանը (ուսուցման համապատասխան մոտեցումների և տարաբնույթ մեթոդների կիրառում, հաղորդակցական միջոցներ, կրթության ճկուն բովանդակություն և այլն):

Խորվաթ մասնագետների կարծիքով, ներառման բնորոշ առանձնահատկություն է համարվում այն, որ զարգացման սահմանափակ կարողություններով անձանց հատուկ կարիքների բավարարումը կարող է դրվել ամբողջ հասարակության վրա, մասնավորապես՝ տեղական համայնքի, քանի որ այն համարվում է այն միջավայրը, որտեղ պետք է յուրաքանչյուր անհատ իրացնի իր հնարավորությունները, ինչպես նաև ստանա իր ամբողջական զարգացմանը նպաստող օգնություն: Սրանում է ամփոփված Խորվաթական հանրապետությունում զարգացող ներառական կրթության հայեցակարգի հիմնական գաղափարը:

Խորվաթ մասնագետների կարծիքով, հատուկ կրթական կարիքներով երեխաների ներառումը հանրակրթության մեջ նրանց կարող է սովորեցնել հասկանալու անհատական տարբերությունների առավելությունները, անձի առանձնահատկությունները և կրթական իրականության պայմաններին նրանց հարմարվելու ուղիները, մշակելու չափանիշներ և տեխնոլոգիաներ, որոնք պետք է երկրում բարելավեն կրթությունը ողջ համակարգը և ճանապարհի հարթեն որակյալ հանրակրթության համար:

Խորվաթիայում գործում են ԿԱՊԿՈԼ երեխաներին հանրակր-

թության մեջ ներառման տարբեր մոդելներ: Նախադպրոցական դաստիարակությունն իրականացվում է 6 ամսականից մինչև 6-7 տարեկանը, ընդ որում՝ ԿԱՊԿՈԼ երեխաները մանկապարտեզ ընդունվելու համար ունեն արտոնյալ պայմաններ: Այսպիսի երեխաները մասայական մանկապարտեզներում կրթվում և դաստիարակվում են կամ սովորական ծրագրով, կամ էլ լրացուցիչ վերականգնողական՝ համալրված ադապտիվ կամ հատուկ ծրագրով: Մասայական մանկապարտեզներում ընդգրկված հատուկ կարիքներով երեխայի դաստիարակությունը կարող է իրականացվել նաև հատուկ խմբում՝ իր դաստիարակի հետ, ընդ որում, որոշ պարապմունքներ իրականացվում են ընդհանուր խմբում՝ սովորական երեխաների հետ:

Մինչև *տարրական* դպրոց ընդունելը, բժշկից, հոգեբանից և հատուկ ու հանրակրթական դպրոցի մանկավարժներից բաղկացած հանձնաժողովն իրականացնում է յուրաքանչյուր երեխայի հոգեբանական վիճակի գնահատում: Հանձնաժողովի գնահատականի հիման վրա յուրաքանչյուր երեխայի առաջարկվում է իր հնարավորություններին համապատասխանող ծրագրով կրթություն, կամ նշանակվում է փորձնական ուսուցման գործընթացում դպրոցի կողմից մշակված հատուկ ծրագրով մանկավարժական ուսումնասիրություն: Որպես կանոն, հոգեբանամանկավարժական հետազոտությունը կատարվում է երեխայի բնակության վայրին առավել մոտ գտնվող դպրոցում: Հետազոտության ծրագրի մեջ են մտնում

ուսումնական ծրագրի յուրացման գործում երեխայի հնարավորությունների որոշումը, տվյալ սովորողի հետ ուսումնական աշխատանքի կազմակերպման համար համապատասխան մեթոդները և միջոցները, երեխային անհրաժեշտ հոգեբանամանկավարժական և ֆիզիկական աջակցության ձևը, նրա հուզական և սոցիալական առանձնահատկությունների մասին որոշումը, ուսուցիչի և ծնողների համագործակցությունը և այլն: Օրենքի համաձայն, հետազոտման տևողության առավելագույն ժամկետը կազմում է երեք ամիս, որից հետո առաջարկվում է համապատասխան կրթություն (կամ հանրակրթական ծրագրով, կամ հարմարեցված ծրագրով, կամ էլ հատուկ ծրագրով):

Սովորողների կրթական կարիքներով պայմանավորված՝ հանրակրթական դպրոցներն առաջարկում են ներառման տարբեր մոդելներ՝ լրիվ կամ մասնակի, ընդ որում, պարտադիր կրթության առաջնահերթությունը տրվում է լիարժեք ներառման մոդելին, որի ժամանակ ԿԱՊԿՈԼ երեխաները ներառվում են սովորական դասարան: Սովորական դասարան թույլատրվում է ներառել մինչև երեք ԿԱՊԿՈԼ երեխա, ընդ որում այսպիսի դասարանում սովորողների թիվը չպետք է գերազանցի 25 երեխայից: Նշված մոդելով սովորում են կամ ընդհանուր, կամ հարմարեցված ծրագրերով: Հարմարեցված ծրագիրը կազմվում է ընդհանուր ծրագրերի և ուսումնական պլանի հիման վրա՝ հաշվի առնելով ԿԱՊԿՈԼ երեխայի կրթական կարիքները: Որպես կանոն, այն

պիտի ծավալուն չլինի և ուսումնական առարկան ներկայացվի ոչ բարդ մակարդակով, ինչպես նաև ենթադրում է ուսուցման համապատասխան հարմարեցված մեթոդների, միջոցների և հնարների կիրառում [7]:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը Հայաստանում

Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքի ճանաչումը ամրագրված է ՀՀ Սահմանադրության 35-րդ հոդվածով, համաձայն որի՝ «Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք»: Հայաստանի Հանրապետությունում հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է բոլորի համար: Համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի, որն ընդունվել է 1999 թվականին, «Պետությունը անհրաժեշտ պայմաններ է ստեղծում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող քաղաքացիների զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթություն ստանալու և սոցիալական հարմարվածությունն ապահովելու նպատակով»: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված է, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը, ծնողների ընտրությամբ, կարող է իրականացվել ինչպես ընդհանուր հանրակրթական, այնպես էլ հատուկ դպրոցներում՝ հատուկ ծրագրերով: Նշված օրենքը հասարակական կազմակերպություններին տվեց հանրակրթական դպրոցներում ներառական կրթության ծրագրեր իրա-

կանացնելու հնարավորություն: 2001 թվականից «Հուլիսի կամուրջ» հասարակական կազմակերպության, դանիական «Առաքելություն Արևելք» միջազգային կազմակերպության և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի աջակցությամբ Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներն իրականացնում են ներառական կրթություն: 2005 թվականին ընդունվեց «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքը: Հայաստանի Հանրապետության կողմից ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիային միանալուց հետո սկսվել է երեխաների իրավունքների պաշտպանության համակարգված գործընթացը հանրապետությունում: Հանրակրթական համակարգին զուգընթաց հանրապետությունում ընթացել են նաև հատուկ կրթության (գիշերօթիկ դպրոցների) համակարգի բարեփոխումներ: Արժևորելով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման, դաստիարակության, բնականոն զարգացման և սոցիալական ինտեգրման խնդիրները՝ հատուկ ուսումնական հաստատությունների բարեփոխումները հիմնված են երկու հիմնարար սկզբունքների վրա՝ կրթության մատչելիություն և որակ: Հետևաբար, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին՝ իրենց անհատական կրթական կարիքին համապատասխան, ներառական որակյալ կրթությամբ ապահովելը դարձել է օրակարգային հարց: Այս ուղղությունների իրականացման

նպատակով ընդունվել են մի շարք իրավական ակտեր, փոփոխություններ են առաջարկվել «Կրթության մասին», «Երեխայի իրավունքների մասին» և «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքներում, 2005 թ. «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» օրենքի ընդունումով սահմանվեց «ներառական կրթություն» հասկացությունը: Համաձայն նշված օրենքի՝ «ներառական կրթությունը՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության համար առանձնահատուկ պայմանների ապահովման միջոցով նրանց համատեղ ուսուցումն է հանրակրթական հաստատություններում նման պայմանների կարիք չունեցող անձանց հետ»: 2007 թվականից սկսած՝ ընդլայնվում է պետականորեն ճանաչված ներառական կրթություն իրականացնող հանրակրթական դպրոցների ցանցը: Այսօր Հայաստանի Հանրապետությունում 117 հանրակրթական դպրոցներում իրականացվում են ներառական կրթություն, այնտեղ սովորում են շուրջ 2700 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ:

Ներառական կրթության զարգացմանը զուգահեռ՝ Հանրապետությունում նվազում է հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների թիվը: 2002 թ. հանրապետությունում գործում էին 52 հատուկ դպրոցներ, որտեղ սովորում էր շուրջ 10.000 երեխա: Այսօր հանրապետությունում գործում

են 23 հատուկ դպրոցներ, որտեղ սովորում է շուրջ 2300 երեխա: Եվ երեխայի բնականոն զարգացման տեսանկյունից, և՛ սոցիալ-տնտեսական պայմաններից ելնելով՝ նպատակահարմար է հատուկ կրթական ծառայությունների ապակենտրոնացումը: Դա հնարավորություն է տալիս կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթադաստիարակչական գործընթացը կազմակերպել՝ առանց երեխային պարտադրաբար ընտանիքից անջատելու՝ ապահովելով նրա համակողմանի հասարակական զարգացումը և նրան ներառելով հանրակրթական ուսումնական հաստատություն:

2007 թվականից ստեղծվել է Երևանի բժշկահոգեբանամանկավարժական կենտրոնը, որի հիմնական նպատակը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք չունեցող երեխաների բացահայտումն է և նրանց դուրսբերումը հատուկ դպրոցներից: Այն հաջողությամբ իրականացվեց: Անցած 5 տարիների ընթացքում գնահատման արդյունքների հիման վրա հատուկ դպրոցների 1-6-րդ դասարաններից դուրս են բերվել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք չունեցող երեխաները, և կանխվել է նման երեխաների մուտքը հատուկ դպրոցներ: Զարգացումները գնահատման կենտրոնի առջև դրեցին նոր մարտահրավերներ, այն է՝ երեխայի կրթական կարիքների գնահատում՝ արդյունավետ կրթության կազմակերպման նպատակով: Անհրաժեշտ է մշակել նոր չափանիշներ՝ հիմնված երեխայի ֆունկցիոնալ կա-

րիքների վրա: Այդ պարագայում երեխայի անհատական ուսումնական պլաններն էլ կմշակվեն երեխայի իրական կրթական կարիքների գնահատման հիման վրա և կնպաստեն երեխայի զարգացմանը: Փաստորեն, հանրապետության շուրջ 8000 հաշմանդամություն ունեցող երեխաներից ՀՀ ԿԳՆ տեսադաշտում են շուրջ 5000-ը: Սակայն չունենք հստակ վիճակագրական տվյալներ, թե կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներից քանիսն են ճանաչված հաշմանդամություն ունեցող երեխաներ: Համաձայն ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից կատարված «Խոսքը ներառման մասին է» (Հաշմանդամություն ունեցող երեխաների համար կրթական, առողջապահական և սոցիալական պաշտպանության ծառայությունների մատչելիությունը Հայաստանում) հետազոտության՝ հանրապետության հաշմանդամություն ունեցող երեխաների 75%-ը սովորում է հանրակրթական դպրոցներում: Համաձայն ՀՀ կառավարության 25.08.2005թ. N 1365-Ն որոշման՝ հանրակրթական դպրոցում սովորող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող յուրաքանչյուր երեխա ֆինանսավորվում է բարձրացված չափաքանակով: Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. ապրիլի 8-ի N 439 որոշմամբ հաստատվել է հանրակրթության պետական մեկ ընդհանուր չափորոշիչ բոլոր սովորողների համար: Ըստ այդ փաստաթղթի՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունն արդյունավետ

կազմակերպելու նպատակով հանրակրթության ծրագրի բովանդակությունը հարմարեցվում է նրանց ընկալման և մտավոր գործունեության կարողություններին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Education and Inclusion in the United States - http://www.ibe.unesco.org/National_Reports/ICE_2008/usa_NR08.pdf

2. Girma Berhanu: Inclusive education in Sweden: responses, challenges, and prospects. International journal of Special Education, Vol.26 No 2 20011

3. Степанова О.: Развитие теории и практики инклюзивного образования в России. 2012 <http://www.gosbook.ru/node/61875>

4. France All Inclusive - Voyager-MoinsCher.com. www.voyagermoinscher.com.

5. Inclusive Education in Italy - Sense Publishers

<https://www.sensepublishers.com/media/503-inclusive-education-in-italy.pdf>

6. Cor J. W. Meijer: Special Needs Edukation in Europe: Inclusive Policies and Practices <http://www.inklusion-online.net/index.php/inklusion-online/article/view/136/136>

7. Inclusive education in Croatia - International Bureau of Education http://www.ibe.unesco.org/fileadmin/user_upload/Inclusive_Education/Reports/sinaia

РЕЗЮМЕ

АНАЛИЗ МЕЖДУНАРОДНОГО ОПЫТА РАЗВИТИЯ ИНКЛЮЗИВНОГО ОБРАЗОВАНИЯ

Паликян С.П.

*профессор кафедры логопедии и восстановительной терапии
Армянского государственного университета имени
Хачатура Абовяна, кандидат биологических наук*

В данной статье представлен аналитический обзор зарубежного опыта реализации концепции инклюзивного образования детей с особыми образовательными потребностями. Автор исследует проблему определения сущно-

сти понятий «инклюзия», «инклюзивное образовывает» и обосновать актуальность развития идей инклюзивного образования в современной системе образования во всем мире.

SUMMARY

ANALYSIS OF THE INTERNATIONAL EXPERIENCE OF DEVELOPMENT OF INCLUSIVE EDUCATION

Palikyan S.P.

Professor at the chair of Speech and Rehabilitation therapy, Khachatur Abovyan Armenian State Pedagogical University, Candidate of Biological sciences

This article presents the analytic review of the realization of inclusive education of children with special educational needs in foreign pedagogy. The author raises the task to explore the entity of terms "inclusion", "inclusive education"

and to settle the actuality of the development of this educational paradigm in the modern system of education all over the world.